ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 657-Ա

« 23 » ապրիլի 2024թ. ք. Էջմիածին

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներով, ուսումնասիրելով ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՊՁԲ 24/7 ծածկագրով գնման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի «19» ապրիլի 2024 թ. կազմված ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4-ով ընդունված որոշմամբ «Հակոբ Սոսյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. Գնահատող հանձնաժողովի ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՊՁԲ 24/7 ծածկագրով գնման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովը Պատվիրատուի ղեկավարին է ներկայացրել «19» ապրիլի 2024 թ. կազմված ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4-ը, որով հայտնել է հետևյալը.

Վաղարշապատի համայնքապետարանի «Բարեկարգում տնօրինություն» ԲՀ-ի կարիքների համար 2024 թվականի մարտի 26-ին հայտարարված Ընթացակարգի 1 – 3-րդ չափաբաժինների մասով մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Հակոբ Սոսյան» ԱՁ-ն, որի հայտը գնահատվել է բավարար և ճանաչվել է ընտրված մասնակից (ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ բավարար գնահատված հայտ և ամենացածր գին, «02» ապրիլի 2024 թ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2):

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պատվիրատուն տեղեկագրում «03» ապրիլի 2024 թ. հրապարակել է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին և անգործության ժամկետ սահմանել 2024 թվականի ապրիլի 4-ից 13-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը («18» ապրիլի 2024 թ.) Պատվիրատուն ծանուցել է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

2024 թվականի ապրիլի 18-ին ստացվել է «Հակոբ Սոսյան» ԱՁ-ի գրությունն առ այն, որ ընկերությունը հրաժարվում է կնքել ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՊՁԲ 24/7 ծածկագրով պայմանագիրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Գնահատող հանձնաժողովը «19» ապրիլի 2024 թ. որոշում է ընդունել «Հակոբ Սոսյան» ԱՁ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, ինչպես նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետի պահանջներով, առաջարկել է դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ «Հակոբ Սոսյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՊՁԲ 24/7 ծածկագրով գնման ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված հիմքերը՝ «Հակոբ Սոսյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:
2. «Հակոբ Սոսյան» ԱՁ-ի տվյալները համապատասխան հիմքերով ներկայացնել լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, «Հակոբ Սոսյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման օրվա հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԵՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված 1
Վաղարշապատ համայնքի ղեկավարին փոխարինող,
առաջին տեղակալի
2024 թվականի ապրիլի 23-ի
թիվ 657-Ա որոշման

Մասնակցի				
Անվանումը	ՀՎՀՀ	Գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը	ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
«Հակոբ Սոսյան» ԱՁ	81501378	Շիրակ, ք. Գյումրի, Պ. Սևակի 20/27	բ. <u>որպես ընտրված մասնակից հրաժարվել</u> կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից,	23.04.2024 թ. ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՊՁԲ 24/7

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ